

Քաղաքացիական ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-2-25.19-Մ3-1 ավագ մասնագետ(2023-06-29)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Փրկարար ծառայություն | Տավուշի մարզային փրկարարական վարչություն | Բնակչության պաշտպանության բաժին | ավագ մասնագետ, (27-2-25.19-Մ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի մյուս ավագ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստան, Տավուշի մարզ, ք. Իջևան Արցախյան 4

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառնություններ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող` մարզպետի համապատասխան որոշման նախագծերի մշակման աշխատանքները.

2. մասնակցում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման աշխատանքները.

3. իրականացում է մարզի տարածքում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքները.

4. իրականացում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցման աշխատանքները՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով

5. մասնակցում է մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակման և դրանց եզրակացությունների կազմման աշխատանքներին՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով

Իրավունքները.

- կազմակերպել քննարկումներ համապատասխան մարմինների պատասխանատուանձանց հետ՝ անհրաժեշտ հիմնավորումներ, պարզաբանումներ, փաստաթղթեր և այլուրացուցիչ տվյալներ ստանալու նպատակով.

- մեթոդական օգնություն տրամադրելու շրջանակներում՝ առաջարկել կատարել փոփոխություններ, պահանջել ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն.

- մարզի ճառագայթային քիմիական մանրէաբանական մշտական հսկողության համակարգի հիմնարկներից /ՃԲՄՄՀՀ/ պահանջել ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվությունը.

- համապատասխան մարմիններին ներկայացնել առաջարկություններ իրենց կողմից կազմված ուսումնական պլաններում ընդգրկվող թեմաների ընտրության, ինչպես նաև ստանալ տեղեկատվություն ուսուցման ուղղությամբ իրականացված միջոցառումների վերաբերյալ.

- ստանալ տարածքների քարտեզները, բնութագրերը և այլ տվյալներ.

- օգտվել ՀԻՏՀ և պաշտոնական այլ էլեկտրոնային տեղեկատվական համակարգերից, օգտագործել Վարչության տեղեկատվական բազան, առկա փաստաթղթերը, նյութերը, խորհրդակցել ոլորտի հետ առնչվող մասնագետների հետ, ստանալ տեղեկատվություն համապատասխան մարմիններից:

Պարտականությունները.

- ուսումնասիրել մարզպետի համապատասխան որոշման նախագծերի ամբողջական փաթեթը.

- ուսումնասիրել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, համապատասխան մեթոդական ուղեցույցները, մշակվող պլաններում ընդգրկել ճշգրտված և հավաստի տվյալներ.

- վերլուծել ստացված տեղեկատվությունը և ամփոփված տեղեկատվությունը փոխանցել Ծառայության համապատասխան ստորաբաժանում.

- ուսումնասիրել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտը կարգավորող իրավական ակտերը, ներկայացնել համապատասխան մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ, դրանց վերաբերյալ կազմել դասընթացների, դասախոսությունների անցկացման թեմատիկ պլան-կոնսպեկտներ.

· ուսումնասիրել ստացված տեղեկատվությունը, վերլուծել և ամփոփման արդյունքում ներկայացնել իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ հիմնավոր պարզաբանումներ:

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության կամ քաղաքացիական պաշտպանության բնագավառում մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
 - Խնդրի լուծում
 - Հաշվետվությունների մշակում
 - Բարեփարքություն
 - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
 - Բանակցությունների վարում
 - Փոփոխությունների կառավարում
 - Ժամանակի կառավարում
 - Փաստաթղթերի նախապատրաստում

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության տարածքային ազդեցություն

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: